

„Die Welt als Wille und Vorstellung“, 1819 թ., անգլ.՝ „The world as will and representation“):

Շոպենհաուերի համաձայն, աշխարհի էութիւնը՝ կոյր ու բանականութենէ զուրկ «կամք»ն է (անգլ.՝ Will, գերմ.՝ Wille) եւ ասոր (աշխարհի) պատկերացումը: Կամքը նաեւ գոյութեան տենչանք մըն է, որ ամբողջական գոհացում չի գտներ: Կամքէն յարատււորէն կը յառաջանան նոր կարիքներ, որոնք բաւարարութիւն չեն գտներ. այս պատճառով ալ յարատւ երջանկութիւն կարելի չէ գտնել ու կեանքը կը յատկանշուի՝ ծանձրոյթով, ցաւով ու տառապանքով:

Ասոյնական կեանքի հանդէպ յռեցես այս դիրքաւորումով, Շոպենհաուեր մահը կը գերադասէ կեանքէն: Այսուհանդերձ, ան երբեք չի յանձնարարէր անձնասպանութիւն: Շոպենհաուերի համաձայն, անձնասպանութիւնը լուծում մը չէ, որովհետեւ այս ձեւով կարելի չէ աշխարհի կամքը նուաճել: Ըստ Շոպենհաուերի, այս տառապանքէն փրկուելու ու երջանիկ դառնալու համար, պէտք է ժխտել կամքը, որով կարելի պիտի ըլլայ զսպել նոր կարիքներու յառաջացումը: Ըստ Շոպենհաուերի այս ուղիին կը հետեւին՝ խստակեաց ու ճգնաւորական կեանքով ապրողները:

Շոպենհաուերի բարոյագիտութեան հիմքը զգացում մըն է՝ *կարեկցութիւնը* (գերմ.՝ Mitleid, անգլ.՝ Compassion), որու միջոցով կը յաղթահարուի անձնասիրութիւնը (Egoism) եւ երեւան կ'ելլէ՝ այլասիրութիւնը (Altruism): Մարդ, նկատելով աշխարհի մէջ գոյութիւն ունեցած տառապանքը, այլ մարդոց հանդէպ կարեկցութիւն տածելով կը նոյնանայ անոնց հետ. զանոնք տեսնելով՝ ինքզինք կը տեսնէ եւ անոնց տառապանքը նկատելով՝ իր տառապանքը կը նկատէ: Կարեկցութիւնը, որ միայն բնագանցութեամբ (Metaphysics) կարելի է բացատրել, իրողութիւն մըն է՝ մարդկային բնութեան ու գիտակցութեան մէջ: Կարեկցութեամբ կը հիմնաւորուին երկու գլխաւոր առաքիւնութիւնները՝ արդարութիւնն ու մարդասիրութիւնը:

Շոպենհաուերի համաձայն, բարոյականութեան մէջ կարելորը՝ բարի կամքը կամ բարի կամեցողութիւնն է: Բարոյական բարձր արժէք կ'ունենայ այն վարմունքը, որ կատարողին համար՝ անշահախնդիր ու մանաւանդ այլասիրական բնոյթ ունի:

Շոպենհաուերի բարոյագիտութիւնը, *զգացումի բարոյագիտութիւնն* է, որ ւելի մանրամասն ներկայացուած է «*Բարոյագիտութեան Տեսութիւններ*» Մաս – 5, առանձին բաժինով (տե՛ս, Էջ 208):

